



հումյանի, Բաֆվի կոմունայի, Մայիսյան աղբստամբուրյան մասին:

Նետագա տարիներին նրա գիտական պրպրտումներն ու միտեր կենտրոնանում են հայ ժողովրդի XIX դարի պատմության, հայ-ուսական հարաբերությունների համակողմանի ուսումնասիրության վրա: Դեռևս նախապատերազմյան շրջանում նա գրեց «Նարոզնիկական խմբակները Անդրկովկասում 1870—1880 թթ.» աշխատությունը, որի համար արժանացավ պատմական գիտությունների բեկնածուի գիտական աստիճանի: Մեր պատմագրության մեջ առաջին անգամ հատուկ բնծարկման ենթարկելով հայ նարոզնիկության հարցը, երիտասարդ գիտնականը շրջանառության մեջ դրեց արխիվային հարուստ նյութեր, հաճեց հիմնավար եզրակացություններին:

Այնուհետև Մկրտիչ Ներսիսյանի գիտական հետաքրքրությունները խորացել են երկու հիմնական ուղղություններով՝ հայ ազգային-ազատագրական պայքարի լուսաբանում և հայ-ուսական հարաբերությունների պատմության հետազոտում: Տարիների տվեալան աշխատանքը սովեց փայլուն արդյունքներ: 1946 թվականին նա իրև դպկտորական դիսերտացիա պաշտպանության ներկայացրեց «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը բարեպաշտ քաղաքացիական պայքարի շրջանում 1850—1870 թվականներին» աշխատությունը, որը նոր խոսք էր մեր պատմագրության մեջ և աչի է ընկնում հայրենասիրական պարսոսով, գիտական խոր վերլուծությամբ, հստակ և համոզիչ եզրահանգումներով: Ժամանակաշրջանի անցիլալ-բաղաբական իրավիճակի նկարագրությունը և հայ հասարակական հոսանքների գործունեության պատմա-բնական վերլուծությունը զուգընթաց՝ զբոսում մերկայացված են մեծ տերությունների դիվանդիտական խաղերն ու խարդալանները «հայկական հարցում», պատկերված են ազգային ներումների և արյունոտ հալածանքների դեմ ժողովրդական զանգվածների դիմադրական պայքարի դրվագները: Այս աշխատությունը կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների հետագա գիտական հետազոտության համար:

1966 թվականին ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի խմբագրությամբ և առաջաբանով հրատարակվեց «Геноцид армян в Османской империи» փաստաթղթերի ժողովածու, որը հայ ժողովրդի պատմության ամենաազդեցական էջերի վավերագրում է և շատ արժեքավոր նյութեր է մատակարարում սուպրան Արզուկ Համիդի և երիտարբերի՝ հայերի նկատմամբ վարած արյունոտ բաղաբականության մերկաց-

վերջերս լրացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր-պրոֆեսոր Մկրտիչ Գեղամի Ներսիսյանի ծննդյան 70-ամյակը:

Շուրջ կես դար է, ինչ անվանի պատմաբանը ծավալել է գիտահետազոտական և հասարակական-կազմակերպչական բեղմնավոր գործունեություն՝ սովետահայ պատմագրությունը հարստացնելով մի շարք ինննատիպ, արժեքավոր ուսումնասիրություններով, նպաստելով հասարակական գիտությունների, մասնավորապես հայագիտության զարգացմանը մեր հանրապետությունում:

Մկրտիչ Ներսիսյանը ծնվել է 1910 թվականի նոյեմբերի 25-ին Երևանի Նահանգի Աշտարակի շրանի Փարպի գյուղում: Մենդավայրում տարրական կրթություն ստանալուց հետո նա ուսումը շարունակում է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում: 1927 թվականին ընդունվում և 1931-ին ավարտում է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը՝ ստանալով պատմաբանի մասնագիտություն:

Համալսարանն ավարտելուց հետո երիտասարդ գիտնականն զբաղվում է Անդրկովկասի և Հայաստանի հեղափոխական շարժումների պատմության հետազոտությամբ, նրա պարտկում է ուսումնասիրություններ Ստեփան Շա-
212

ման համար: Գիտական և հասարակական լայն արժագանի գտած այս ժողովածուն մերկացնող անհերքելի մի փաստարկ է բուրժուական հեղափոխության պատմագրության՝ մտերի անցյալի պատմական նշմարաւորութիւնը խնդարյունաբեր և ցնդասպանութեան մեջ հանցավորներին շինողացնելու նկրտումների դեմ: Մ. Ներսիսյանը հրատարակել է նաև ուսումնասիրություններ Ջիյունի 1862 թվականի պատմութեան, արևմտաեւրոպայան գանգալածային կոտորածների, գործարար Անդրանիկի, 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմին հայ կամավորների մասնակցութեան մասին և այլն: Նա հռահրուն մասնակցութեան է ցուցաբերել հայ ժողովրդի պատմութեան դասագրքերի, գիտա-մասնաշաղկապի աշխատութիւնների ստեղծմանը: Գրաֆետը Մ. Ներսիսյանը հայ ժողովրդի պատմութեան անգրաւորի ուսումնական ձեռնարկի կազմողներից ու խմբագիրներից մեկն է, նա հեղինակակցութեամբ և խմբագրութեամբ լույս են տեսել նաև «Հայ ժողովրդի պատմութեան» դպրոցական դասագրքի երկրորդ հատորը, մեր ժողովրդի զարգացման պատմութեան միհատորյակը, որը վերջերս համալսարանի կողմից հրատարակվեց նաև ռուսերեն: Մ. Ներսիսյանը Հայկական սովետական հանրագիտարանի գրախաղար խմբագրութեան անդամ է և հայ ժողովրդի նոր և նորագոյն շրջանի պատմութեան գիտաւնայալին խորհրդի նախագահը: Գիտութեան վիտակակալը գործիչը մեծ երախտի ունի հայ-ռուսական պատմական կապերի և հարաբերութեանների պրոբլեմի գիտական հետազոտութեան ասպարեզում: Նա «Սովետական և ռուս-հայկական հարաբերութեանները 1770—1790 թթ.», «Ինկարիտները Հայաստանում», «Из истории русско-армянских отношений» (երկու հատորով), «Отечественная война 1812 года и народы Кавказа» աշխատութեանները. սովետահայ պատմագրութեան ուղագրակ երևութեանից են և զգալի նետաճիւրհութեան են ներկայացնում համատեղեական պատմական գիտութեան մի շարք կարևոր պրոբլեմների ամբողջական ուսումնասիրման տեսակետից: Այդ գրքերը գիտնականին բերեցին համալսարանական նախաձեռնումը: Մնում պատմաբանը գիտական շրջանառութեան մեջ դրեց բազմաթիվ նոր արժեքավոր արխիւային փաստաթղթեր, պատմական լայն ֆունի վրա վերլուծեց և մեկնաբանեց դրանց գիտական խորութեանը: Հայ-ռուսական տնտեսական, ռազմա-նաւթահանական, մշակութային կապերը վերահիշյալ գրքերում վերահիշված են ժամանակակից պատմութեան հանգուցային պրոբլեմների հետ սերտ առնչութեան մեջ, քաղաքացիական են ժողովուրդների բարեկամութեան և համագործակցութեան ակունքները, զարգացման ակունքները: Գիտնականը հայտնաբերեց և

հրատարակեց կարևոր նշանակութեան ունեցող վավերագրեր հայ-ռուսական պատմական կապերի վերաբերյալ: Հատկապես նշանակալից են դեկտրիտները Ե. Լաչինովի գրառումները Հայաստանի մասին, Գ. Բարիցկու և Վ. Վոլխովսկու նամակները Անդրկովկասի վերաբերյալ, Ի. Բուրգովի զեկուցագրերը 1828—1829 թվականների ռուս-թուրքական պատերազմի արդիւյթը:

Մ. Ներսիսյանը հրատարակել է նաև մի շարք ուսումնասիրութեաններ, որոնցում լուսաբանված են Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պատմական նշանակութեանը, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը XVIII—XIX դարերում, Երևանի ազատագրումը ռուսական բանակի կողմից, Օչականի նախաձեռնումը 1827 թվականին և մեր ժողովրդի համար կենսական նշանակութեան ունեցող այլ հարցեր:

Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի գիտական հետազոտութեաններն աչի են ընկնում պրոբլեմատիկայի հետազոտութեան և կարևորութեանը, հարցադրումների խորութեամբ և համարձակութեամբ, առաջադրված խնդիրների նորովի վերահիշումով, փաստերի համակոմունի վերլուծութեան վրա խարսխված արժեքավոր Լեզանանգումներով:

Մկրտիչ Ներսիսյանը հետազոտական իր սկստուն աշխատանքը տասնամյակներ շարունակ զուգակցել է գիտա-մեթոդաւորման և գիտա-կազմակերպչական ու հասարակական եռանդուն գործունեութեան հետ: Նա հայ ժողովրդի և ՍՍՀՄ ժողովուրդների պատմութեան է դասավանդել Երևանի բանֆակում, կոմհամալսարանում, հայկական և ռուսական մեթոդաւորման ինստիտուտներում, Երևանի պետական համալսարանում, որտեղ եղել է հայ ժողովրդի պատմութեան ամբիւնի վարիչ: Նա գիտական դեկավարութեամբ գրվել և պաշտպանվել են մի շարք բեկնածուական և դեկտրաւորական դիսերտացիաներ:

Դեռևս նախքան Հայրենական մեծ պատերազմը Մ. Ներսիսյանը ՍՍՀՄ Գիտութեանների ակադեմիայի հայկական ֆիլիալի (Արմֆան) պատմութեան ինստիտուտի դիրեկտորն էր: 1950 թվականին նա ընտրվում է Հայկական ՍՍՀ գիտութեանների ակադեմիայի ակադեմիկոս և վիցե պրեզիդենտ: Երկար տարիներ վարել է հասարակական գիտութեանների բաժանմունքի ակադեմիկոս-հարտուղարի պաշտոնը: 1966—1977 թթ. ակադ. Մկրտիչ Ներսիսյանը Երևանի պետական համալսարանի ռեկտորն էր և իր ակունդն է ներդրել հանրագիտութեան մայր բունի զարգացման գործում: Այժմ նա հաջողութեամբ զլխավորում է Հայկական ՍՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտի հայ-ռուսական պատմական կապերի նորաստեղծ բաժնին:

Անվանի գիտնականի բեղմնավոր գործունեությունը կտրեւոր բնագավառներից մեկն էլ հրատարակչական-խմբագրական աշխատանքն է, որին նա նվիրել է նվիրաբերում է մեծ եռանդ: Եւ է հասարակական ակտիվ գործունեություն. Գեոևս 1944—1946 թվականներին նա խմբագրել է Հայկական ՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկագիրը», երկար տարիներ գլխավորել է ակադեմիայի խմբագրական-հրատարակչական խորհրդի աշխատանքները՝ զգալի ավանդ ներդնելով գիտական հրատարակությունների մակարդակը բարձրացնելու գործում: 1958 թվականին Մկրտիչ Ներսիսյանի նախաձեռնությամբ հիմնադրվեց «Պատմա-բանասիրական հանդեսը», հայագիտական ծանրակշիռ մի պարբերական, որի անվաճառ գլխավոր խմբագիրն է նա՝ ստեղծման պահից մինչև օրս: Համալսարանում աշխատած տարիներին ևս նա լուրջ ուշադրություն էր նվիրում հրատարակչական գործին. նախնական լույս տեսնող գիտական ժողովածուների փառասերն սկսեցին հրատարակվել «Թանքեր Երևանի համալսարանի», «Գիտական տեղեկագիր», «Երևանի համալսարան» պարբերականները: Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը ծավալում է հասարակական ակտիվ գործունեություն. նա բազմիցս ընտրվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի ղեկավարատ. ՀԿԿ Կենտկոմի անդամ, եղել է սովետա-բուլղարական համամիութենական ընկերության հայկական մասնաճյուղի նախագահ: Պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով, «Գեորգի Գիսկարով» մեդալով: Վերջերս, ծննդյան 70-ամյակի առթիվ, նա պարգևատրվեց «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով:

«Թանքեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագրական կոլեգիան շերտերին շնորհավորում է վաստակաշատ հոբելյարին ծննդյան 70-ամյակի և գիտական-հասարակական գործունեության 50-ամյակի առթիվ՝ մաղթելով նրան փառաբանություն և հետագա ստեղծագործական հաջողություններ: